



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

АГЕНТСТВО ИНТЕЛЛЕКТУАЛЬНОЙ СОБСТВЕННОСТИ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱԳԻՐ

ОФИЦИАЛЬНЫЙ
БЮЛЛЕТЕНЬ

№ 12

ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ПРОМЫШЛЕННАЯ СОБСТВЕННОСТЬ

Սույն տեղեկագրում
գետեղված տեղեկությունները
համարվում են հրապարակված 2013 թվականի դեկտեմբերի 25-ից

ԳՅՈՒՏԵՐ	4, 82
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>6, 84</i>
ՕԳՏԱԿԱՐ ՄՈԴԵԼՆԵՐ	15, 89
<i>Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին</i>	<i>17, 91</i>
ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ.....	19, 93
<i>Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին</i>	<i>21, 95</i>
ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ	23
<i>Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին</i>	<i>25</i>
<i>Տեղեկություններ ապրանքային նշանների գրանցման գործողության երկարաձգման մասին</i>	<i>75</i>
ՑՈՒՑԻՉՆԵՐ	76
ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	78
ԵՐԿՏԱՌ ԿՈՂԵՐԸ	96

Հրատարակվում է Մտավոր սեփականության գործակալության կողմից 1995թ.

0010, Երևան, Գլխավոր պող., Կառավարական տուն 3
 Հեռ. 563-267 հայտերի ընդունման բաժին
 Հեռ. 561-126 տեղեկատվական-տեխնոլոգիական ապահովման բաժին

Издается Агентством интеллектуальной собственности с 1995г.

0010, Ереван, Главный проспект, Дом Правительства 3
 Тел. (374 10) 563-267 отдел приема заявок
 Тел. (374 10) 561-126 отдел информационно-технологического обеспечения

СОДЕРЖАНИЕ

ИЗОБРЕТЕНИЯ.....	4, 82
Сведения о выданных патентах.....	6, 84
ПОЛЕЗНЫЕ МОДЕЛИ.....	15, 89
Сведения о выданных патентах.....	17, 91
ПРОМЫШЛЕННЫЕ ОБРАЗЦЫ.....	19, 93
Сведения о зарегистрированных промышленных образцах.....	21, 95
ТОВАРНЫЕ ЗНАКИ.....	23
Сведения о зарегистрированных товарных знаках и знаках обслуживания	25
Сведения о продлении действия регистрации товарных знаков.....	75
УКАЗАТЕЛИ.....	76
СООБЩЕНИЯ.....	78
ДВУБУКВЕННЫЕ КОДЫ.....	96

CONTENTS

INVENTIONS.....	4, 82
Information on granted patents.....	6, 84
UTILITY MODELS.....	15, 89
Information on granted patents.....	17, 91
INDUSTRIAL DESIGNS.....	19, 93
Information on registered industrial designs.....	21, 95
TRADE MARKS.....	23
Information on registered trade marks and service marks	25
Information on renewal of effect of trademark registration	75
INDEXES.....	76
REPORTS.....	78
TWO-LETTER CODES.....	96

ԳՅՈՒՏԵՐ

Գյուտերին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

- 11** *արտոնագրի համարը*
- 13** *փաստաթղթի տեսակի կոդը*
A գյուտի արտոնագիր
B արտոնագրառունակության մասին եզրակացություն
- 21** *հայտի համարը*
- 22** *հայտի ներկայացման թվականը*
- 23** *ցուցահանդեսային առաջնության թվականը*
- 31** *առաջին հայտի համարը*
- 32** *առաջին հայտի ներկայացման թվականը*
- 33** *երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը*
- 45** *գյուտի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը*
- 51** *միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)*
- 54** *գյուտի անվանումը*
- 56** *տեղեկատվության աղբյուրներ*
- 57** *գյուտի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը*
- 62** *ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը*
- 71** *հայտատուն, երկրի կոդը*
- 72** *գյուտի հեղինակը (ները), երկրի կոդը*
- 73** *արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը*
- 74** *արտոնագրային հավատարմատար*
- 85** *միջազգային հայտի (PCT) ազգային փուլ անցման թվականը*
- 86** *միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը*
- 87** *միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը*

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) (2013.01) (11) 2784 (13) A
A23C 9/00

(21) AM20130107 (22) 12.07.2013

(71) Աշխեն Գրիգորիի Գրիգորյան (AM), Աստղիկ Ջավենի Փեփոյան (AM)

(72) Աշխեն Գրիգորիի Գրիգորյան (AM), Աստղիկ Ջավենի Փեփոյան (AM)

(73) Աշխեն Գրիգորիի Գրիգորյան, 0009, Երևան, Մաշտոցի պող. 49, բն. 21 (AM), Աստղիկ Փեփոյան, 0037, Երևան, Ազատության 11, բն.10 (AM)

(54) Կենդանիների աղիքային միկրոֆլորայի կարգավորման բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է կենսատեխնոլոգիային, մասնավորապես՝ կենդանիների աղիքային միկրոֆլորայի կարգավորման բաղադրանյութին և կարող է կիրառվել սիմբիոտիկների արտադրության համար:

Բաղադրանյութը ներառում է Lactobacillus acidophilus Er-2 317/402 շտամի 3x10⁸ մգ կենսունակ մանրէներ պարունակող լիոֆիլիզատ և Eleutherococcus senticosus բույսի (սիբիրյան ժենշեն) արմատների սպիրտային լուծամզուքի լիոֆիլիզատ: Բաղադրամասերը վերցված են 1:1 զանգվածային հարաբերակցությամբ:

Ստեղծված է նոր սիմբիոտիկ, որն ունի բարձր կարգավորող ազդեցություն գյուղատնտեսական կենդանիների աղիքային միկրոֆլորայի և ֆիզիոլոգիական, կենսաքիմիական որոշ ցուցանիշների վրա հիպոկինեզի պայմաններում:

(51) (2013.01) (11) 2785 (13) A
A61K 39/00

(21) AM20130046 (22) 04.04.2013

(71) Մարիամ Սարգսյան (AM)

(72) Մարիամ Սարգսյան (AM)

(73) Մարիամ Սարգսյան, 0041, Երևան, Մուրա-ցանի 4-րդ փող. 12/2 (AM)

(54) Թունային պատվաստանյութ անատրոբային էնտերոտոքսեմիայի դեմ

(57) Գյուտը վերաբերում է անասնաբուժական մանրէաբանության բնագավառին, մասնավորապես՝ ճագարների անատրոբային էնտերոտոքսեմիայի դեմ թունային պատվաստանյութի ստացմանը:

Պատվաստանյութը ներառում է հակաձին, կլանիչ և ակտիվազրկող նյութ: Որպես հակաձին այն ներառում է ճագարների Clostridium perfringens-ի A շիճուկաբանական տիպի շտամների աճեցվածքների խառնուրդի քամվածք, որպես կլանիչ՝ գլիցերին, իսկ որպես ակտիվազրկող նյութ՝ ֆորմալին, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ՝ մեկ լիտր պատվաստանյութի համար, մլ. հակաձին՝ 870, կլանիչ՝ 100 և ակտիվազրկող նյութ՝ 30: Շտամներն անջատված են ճագարների լյարդից, փայծաղից, ավշահանգույցներից, սրտի արյունից, երիկամներից և կոյր ու բարակ աղիներից: Աճեցվածքները վերցված են հավասար ծավալով:

Պատվաստանյութը օժտված է իմունաբանական արդյունավետությամբ, հանդիսանում է նաև կենսախթանիչ և չի առաջացնում հետպատվաստումային բարդություններ (ալերգիա, տեղային բորբոքումներ):

(51) (2013.01) (11) 2786 (13) A
B01D 24/00

C02F 1/00

(21) AM20130085 (22) 14.06.2013

(71) Հակոբ Հրանտի Հակոբյան (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(72) Հակոբ Հրանտի Հակոբյան (AM), Ալեքսան Մկրտչի Արզումանյան (AM)

(73) Հակոբ Հրանտի Հակոբյան, 3102, Գյումրի, Ղուկասյան 10 շարք, տուն 9 (AM), Ալեքսան Արզումանյան, 3102, Գյումրի, Գոգունցի 6, բն. 4ա (AM)

(54) Կեղտաջրերի մաքրման տեղակայանք

(57) Գյուտը վերաբերում է բնապահպանության բնագավառին, մասնավորապես՝ կեղտաջրերի մաքրման գործընթացին, և նախատեսված է մակերևութային ակտիվ նյութերից, կախույթներից և ներկերից ջրի մաքրման համար:

Կեղտաջրերի մաքրման տեղակայանքն ունի իրան՝ հատիկավոր գոտիչ տարրերով լցված ստորին և իրեն համառանցք տեղադրված կոնաձև կոնտակտային խուց ունեցող տեղամասերով ու օդի պղպջակների գոյացման և փրփուրից

ջրագտման տեղամասով, ջրի և օդի առբերիչ, կողմնատար խողովակագծեր և փրփրահավաք ճոռ: Կոնաձև կոնտակտային խուց ունեցող տեղամասն ունի դեպի վերև լայնացող հատած կոնի տեսք, ընդ որում, դրա ծնիչի անկյունը հավասար է փրփուրից ջրագտման կոնական տեղամասի ծնիչի անկյանը: Պղպջակների գոյացման և փրփուրից ջրագտման տեղամասը կազմված է երկու՝ գլանաձև և դեպի վերև նեղացող հատած կոնի տեսք ունեցող հատվածամասերից:

Բարձրացվում է զտման արդյունավետությունը, 1 նկ.:

(51) **(2013.01)** (11) **2787** (13) **A**
C04B 38/00
C04B 33/00

(21) **AM20130097** (22) **04.07.2013**

(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Արծրունի Սաֆարյան (AM), Թամարա Սարգսյան (AM)

(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Ծակոտկեն շինարարական իրերի պատրաստման եղանակ**

(57) Գյուտը վերաբերում է շինարարական նյութերի բնագավառին, մասնավորապես՝ ծակոտկեն շինարարական իրերի պատրաստման եղանակներին:

Հումքային նախապատրաստվածքները թրծում են, կաղապարում, փքեցնում, ստացված ծակոտկեն իրերը սառեցնում են, ապա՝ կաղապարահանում: Որպես հումք օգտագործում են օբսիդիանի հատիկների՝ 10-20, 20-40 և 40-70մմ չափերով չափամասեր: Նախապատրաստվածքների կաղապարումն իրականացնում են մինչև թրծումը և փքեցումը: Սառեցումն իրականացնում են փուլերով՝ սկզբից արագ սառեցնում են մինչև 700-750°C ջերմաստիճան 10-15 րոպեի ընթացքում, ապա կատարում են իրերի թրծաթողում 600-650°C ջերմաստիճանում 45-60 րոպեի ընթացքում, որից հետո դանդաղ սառեցնում են մինչև սենյակային

ջերմաստիճան: Թրծումը, փքեցումը և սառեցումն իրականացնում են մեկ վառարանում:

Պարզեցվում է եղանակը, նվազեցվում է ներգաճախները, ստացվում են բարձր ջերմաստիճանադիմացկունությամբ, ցածր խտությամբ ֆունկցիոնալ միաձուլ իրեր:

(51) **(2013.01)** (11) **2788** (13) **A**
C07D 307/00

(21) **AM20120069** (22) **28.04.2012**

(71) «Երևանի պետական համալսարան», պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM), Ալինա Դովլաթյան (AM)

(72) Ալինա Դովլաթյան (AM), Ռոմիկ Հարությունյան (AM), Պետրոս Ղազարյան (AM)

(73) «Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0025, Երևան, Ալեք Մանուկյան 1 (AM), Ալինա Դովլաթյան, 0055, Երևան, Սողոմոն Տարոնցու 9-րդ փող. 2, բն. 220 (AM)

(54) **Ցետիլպիրիդինիումի պերօքսոդիսուլֆատի կիրառումը որպես հակասնկային միջոց**

(57) Գյուտը վերաբերում է կենսաօրգանական քիմիային, մասնավորապես՝ կենսաբանորեն ակտիվ միացությանը՝ ցետիլպիրիդինիումի պերօքսոդիսուլֆատին, որը կարող է կիրառվել բժշկության և գյուղատնտեսության մեջ՝ որպես հակասնկային միջոց: Ցետիլպիրիդինիումի պերօքսոդիսուլֆատը ստանում են ջրային լուծույթում ցետիլպիրիդինիումի բրոմիդի և կալիումի պերսուլֆատի փոխազդեցությամբ:

Ընդլայնվում է հակասնկային և հակամանրէային ակտիվությամբ օժտված միացությունների տեսականին:

(51) **(2013.01)** (11) **2789** (13) **A**
C08L 95/00

(21) **AM20130096** (22) **04.07.2013**

(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Նիկոլայ Չիլինգարյան (AM), Արթուր Հովսեփյան (AM)

(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) Բիտումային բաղադրանյութ

(57) Գյուտը վերաբերում է ասֆալտաբետոնային ծածկույթների բիտումային բաղադրանյութերին և կարող է կիրառվել ճանապարհաշինարարությունում:

Բիտումային բաղադրանյութը ներառում է նավթային ճանապարհային բիտում և հարակցական հավելանյութ: Որպես հարակցական հավելանյութ այն ներառում է բազմաէթիլենգլիկոլտերեֆտալատի արտադրության թափոնների հիդրոլիզի արգասիք, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ, զանգվ. % . նավթային ճանապարհային բիտում՝ 98.0-99.0, բազմաէթիլենգլիկոլտերեֆտալատի արտադրության թափոնների հիդրոլիզի արգասիք՝ 1.0-2.0: Բազմաէթիլենգլիկոլտերեֆտալատի արտադրության թափոնների հիդրոլիզի արգասիքը այլումինի, երկաթի կամ կալցիումի օլիգոէթիլենգլիկոլտերեֆտալատ է, իսկ նավթային ճանապարհային բիտումը ԵՀՃ 60/90 մակնիշի է:

Բարձրացվում է բիտումային բաղադրանյութի արդյունավետությունը՝ հարակցական հավելանյութի պարունակության նվազեցման շնորհիվ, ասեղի մխրճման խորությունը և փափկացման ջերմաստիճանը:

(51) (2013.01) (11) 2790 (13) A
D06B 3/00

(21) AM20130039 (22) 19.03.2013

(71) Ջոհրաբ Մինասյան (AM), Սահակ Մկոյան (AM), Ռոզա Մկոյան (AM)

(72) Ջոհրաբ Մինասյան (AM), Սահակ Մկոյան (AM), Ռոզա Մկոյան (AM)

(73) Ջոհրաբ Մինասյան, 3115, Գյումրի, Գորկու 33, բն. 10 (AM), Սահակ Մկոյան, 3115, Գյումրի, Շչերբինա ճա, բն. 25 (AM), Ռոզա Մկոյան, 3115, Գյումրի, Շչերբինա ճա, բն. 25 (AM)

(54) Գուլպեղենի վերջնամշակման տեղակայանք

(57) Գուլպեղենի վերջնամշակման տեղակայանքը վերաբերում է տեքստիլ և թեթև արդյունաբերությանը, մասնավորապես՝ բնական, արհեստական և սինթետիկ թելերով հյուսված գուլպեղենի վերջնամշակման բնագավառին:

Գուլպեղենի վերջնամշակման տեղակայանքն ունի իր առանցքի շուրջը պտտման հնարավորությամբ տեղակայված սկավառակ, դրա վրա տեղակայված կաղապարներ, գուլպեղենի ջերմախոնավային մշակման, ներկման և ձևագոյացման հանգույցներ, շոգեգեներատոր, օդատաքացուցիչ, օդափոխիչ, ներկանյութի և փափկացնող նյութի պատրաստման հանգույցներ, պոմպ: Համաձայն գյուտի, տեղակայանքը լրացուցիչ ունի աշխատանքային խոց և մուտքի ու ելքի կարճախողովակներ ունեցող բաշխիչ: Սկավառակը տեղակայված է աշխատանքային խցի կենտրոնական հատվածամասում, որի վրա տեղակայված են կաղապարներ: Խցի ստորին մասում տեղակայված է ջրի հոսք առաջացնող հանգույց: Կաղապարները սկավառակի վրա տեղակայված են իրարից հավասար հեռավորության վրա՝ շրջանագծով, ընդ որում, կաղապարները ստորին հատվածում ունեն սկավառակից ցածր տեղակայված թիեր, բաշխիչի մուտքը միակողմանի փականի և մղման պոմպով միակցված է շոգեգեներատորին և օդատաքացուցիչին, իսկ ելքը՝ միակողմանի փականի և պոմպի միջոցով միակցված է կաթսային, որը կազմված է իրար հաղորդակցվող ներկանյութի և փափկացնող նյութի պատրաստման հանգույցներից:

Ապահովվում են ջերմախոնավային մշակման, ներկման և ձևագոյացման գործույթները մեկ խցում, 6 նկ.:

(51) (2013.01) (11) 2791 (13) A
E02D 27/00
E04B 1/00

(21) AM20130054 (22) 13.04.2013

(71) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Զովա Գեղամի Մարտիրոսյան (AM)

(72) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան (AM), Զովա Գեղամի Մարտիրոսյան (AM)

(73) Գուրգեն Գեղամի Մարտիրոսյան, 0069, Երևան, Գոգոլի 5, բն. 6 (AM), Զովա Գեղամի Մարտիրոսյան, 0069, Երևան, Գոգոլի 5, բն. 6 (AM)
(54) Բազմաշերտ սեյսմամեկուսիչ հենարան
 (57) Գյուտը վերաբերում է շինարարության բնագավառին, մասնավորապես՝ շենքերի և կառույցների այն հիմնական տարրերին, որոնք ապահովում են սեյսմակայունությունը:

Բազմաշերտ սեյսմամեկուսիչ հենարանն ունի մետաղական կցաշուրթեր, դրանց միջև տեղակայված հարթ հատակ, կոնական միջնամաս ու հարթ շուրթեր ունեցող մետաղյա ափսեաձև և ռետինե, միմյանց հաջորդող համառանցք օղակաձև շերտեր: Ռետինե շերտերի միջև տեղադրված են մետաղյա ափսեաձև շերտերից կազմված բլոկներ: Մետաղյա ափսեաձև շերտերի կոնական միջնամասի և հարթ շուրթերի վրա կատարված են շրջանագծորեն հավասարաչափ դասավորված հանվածքներ: Յուրաքանչյուր բլոկում մետաղյա ափսեաձև շերտերը տեղակայված են այնպես, որ բոլոր շերտերի հանվածքները համընկնեն իրար:

Ապահովվում է շենքերի և կառույցների սեյսմակայունությունը ցանկացած ուղղությամբ և ամպլիտուդի մեծությամբ տատանումների և ցնցումների դեպքում, 3 նկ.:

Էլեկտրամագնիսական փականներ, եռաստիճան գազային ռեդուկտոր, գազային բալոնը գազային էլեկտրամագնիսական փականին և գազային ռեդուկտորը շարժիչին կապող գազային խողովակներ, բենզաբաք, բենզախողովակներով իրար միացած բենզինի մղիչ և բենզինային էլեկտրամագնիսական փական, որոնք համապատասխանաբար միանում են բենզաբաքին և շարժիչին, ինչպես նաև բենզինային էլեկտրամագնիսական փականին միացած վառելիքի տեսակի երկաստիճան էլեկտրական փոխարկիչ: Մնման համակարգը լրացուցիչ ունի կառավարման էլեկտրոնային բլոկ, դրոսելային սահափականի հաղորդակի լծակի սեկտորով աշխատող հպակային անջատիչ և ծնկաձև լիսեռի պտուտաչափ, ընդ որում էլեկտրոնային բլոկը միացած է փոխարկիչին, էլեկտրամագնիսական փականին և պտուտաչափին, իսկ հպակային անջատիչը միացած է փոխարկիչին և գազային էլեկտրամագնիսական փականին:

Ապահովվում է շարժիչի արգելակման ժամանակ, գազի մատուցման անջատումն ու դրա տնտեսումը, ապահովվում է լիցքավորման համար կատարվող վազքի կրճատումը և էկոլոգիական անվտանգությունը, 1 նկ.:

(51) **(2013.01)** (11) **2792** (13) **A**
F02M 21/00
 (21) **AM20120086** (22) **19.06.2012**
 (71) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ (AM)
 (72) Նորիկ Ավետիսի Բազիկյան (AM), Ռազմիկ Մակարի Բալայան (AM), Արման Ռոբերտի Սիմոնյան (AM)
 (73) «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամ, 0009, Երևան, Տերյան 74 (AM)
(54) Ներքին այրման շարժիչի կոմբինացված սնման համակարգ
 (57) Գյուտը վերաբերում է մեքենաշինությանը, մասնավորապես՝ բենզինային կամ գազային վառելիքներով աշխատող ներքին այրման շարժիչի կոմբինացված սնման համակարգին:
 Սնման համակարգն ունի գազի բալոն, լցավորման սարք, գազային և բենզինային

(51) **(2013.01)** (11) **2793** (13) **A**
F03D 3/00
 (21) **AM20120148** (22) **24.10.2012**
 (71) Գուրգեն Սեդրակի Ազարյան (AM)
 (72) Գուրգեն Սեդրակի Ազարյան (AM)
 (73) Գուրգեն Սեդրակի Ազարյան, 3112, Գյումրի, Հարավ-արևելյան շրջանցող ճանապարհի 1-ին փակ. 3 (AM)
(54) Հողմագեներատոր
 (57) Հողմագեներատորն ունի քամու ուղղորդիչներով ստատոր, ստատորի կենտրոնում ուղղաձիգ առանցքի շուրջը պտտական շարժման հնարավորությամբ համառանցք տեղակայված թիակներով ռոտոր:
 Ստատորն ունի վերին արտաքին, վերին ներքին, ստորին արտաքին և ստորին ներքին օղագոտիներ: Ստատորի քամու ուղղորդիչները կոշտ ամրակցված են օղագոտիներին: Ռոտորն ունի ներքին գլանաձև մակերևույթ, արտաքին

վերին և ստորին օղագոտիներ: Ռոտորի թիակները կոշտ ամրակցված են ներքին գլանաձև մակերևույթին և օղագոտիներին: Հողմագեներատորը լրացուցիչ ունի ռոտորի ներքին գլանաձև մակերևույթի ներսում համառանցք տեղակայված, կողմնային գլանաձև մակերևույթ ունեցող ներքին ստատոր: Ներքին ստատորի կողմնային գլանաձև մակերևույթի, ռոտորի ներքին գլանաձև մակերևույթի և օղագոտիների, արտաքին ստատորի ներքին օղագոտիների վրա մոնտաժված են էլեկտրափաթույթներ:

Պարզեցվում է հողմագեներատորի կառուցվածքը, 3 նկ.:

(51) (2013.01) (11) 2794 (13) A
G01R 31/00
H02J 7/00

(21) AM20130120 (22) 09.08.2013
(71) Հայկ Ռոբերտի Սիմոնյան (AM)
(72) Հայկ Ռոբերտի Սիմոնյան (AM)
(73) Հայկ Ռոբերտի Սիմոնյան, 0010, Երևան, Նալբանդյան 15 (AM)
(54) **Լարման քիմիական աղբյուրի ինքնալիցքաթափման հոսանքը չափող սարք**
(57) Գյուտը վերաբերում է չափիչ տեխնիկային և կարող է օգտագործվել ինչպես շահագործման մեջ գտնվող, այնպես էլ նոր մշակվող լարման քիմիական աղբյուրների որակի գնահատման համար նրանց ինքնալիցքաթափման հոսանքի չափման միջոցով:

Սարքն ունի աղբյուրի դրական և բացասական բևեռներին միացվող երկու սեղմակ, հոսանքորոշող հանգույց, կոճակային փոխանջատիչ, հաստատուն հոսանքի կայունացված աղբյուր, բազմապտույտ պոտենցիոմետր, էլեկտրոնային երկու բանալի, փոփոխական հոսանքի դիֆերենցիալ ուժեղարար, սինքրոն ուղղիչ-գտիչ, ուղղանկյունաձև իմպուլսների գեներատոր, հզորության ուժեղարար, հաստատուն հոսանքի միկրոշարժիչ, լարում-հոսանք ձևափոխիչ, զրո- գալվանաչափ, փոփոխական դիմադրություն: Ընդ որում հոսանքորոշող հանգույցն ունի ճշգրիտ հոսանքորոշող դիմադրություն, հաստատուն հոսանքի դիֆերենցիալ ուժեղարար և վոլտմետր: Չափման ենթակա աղբյուրի լարումը խստորեն

կայունացվում է և չափվում է այն հոսանքը, որն անհրաժեշտ է չափման տևողության ընթացքում այդ լարումը կայուն պահելու համար:

Բարձրացվում է ինքնալիցքաթափման հոսանքի չափման ճշգրտությունը, ապահովվում են ինքնալիցքաթափման հոսանքի չափման հնարավորությունը՝ անկախ լարման աղբյուրի լիցքավորվածության աստիճանից և սարքի օգտագործման հարմարավետությունը, 1 նկ.:

(51) (2013.01) (11) 2795 (13) A
G02B 26/00

(21) AM20130048 (22) 04.04.2013
(71) Էդուարդ Հարությունյան (AM)
(72) Էդուարդ Հարությունյան (AM)
(73) Էդուարդ Մուշեղի Հարությունյան, 0031, Երևան, Զոհրապի 115 (AM)
(54) **Լույսի շեղման և սկանավորման եղանակ**
(57) Գյուտը վերաբերում է լույսի շեղմանն ու սկանավորմանը և կարող է կիրառվել օպտիկական սարքաշինության մեջ, օպտիկական ճառագայթի բացման և սկանավորման համակարգերի կառուցման, տարածության մեջ լազերային ճառագայթի տեղաշարժման ժամանակ, ինչպես նաև մանրադիտակներում:

Ըստ լույսի շեղման և սկանավորման եղանակի լույսի ճառագայթը կառավարում են անդրադարձնող միջավայրի միջոցով գեներատորից պիեզոթիթեղին տրվող լարումով՝ սկանավորելով լույսը: Գյուտի համաձայն, որպես լույսի կառավարման միջավայր վերցնում են ակուստաօպտիկական բյուրեղը, որի վրա լուսային ճառագայթն ընկնում է Բրեգի անկյան տակ: Գրգռում են ակուստիկական ալիքներ և մեծացնում ակուստիկ ալիքների հզորությունը: Լույսը ընկնող ուղղությունից ամբողջությամբ վերամղում են դեպի դիֆրակցված ուղղությունը: Դիֆրակցիայի անկյունը փոխում են ակուստիկ ալիքների հաճախության միջոցով և բյուրեղը պտտում են այն առանցքի շուրջը, որը համընկնում է ընկնող լույսի ճառագայթի ուղղության հետ:

Մեծացվում է սկանավորման դիրքի ճշտությունը, բարձրացվում է ճառագայթի շեղման արագագործությունը և ապահովվում է նախօրոք տրված օրենքով սկանավորումը, 1 նկ.:

- (51) **(2013.01)** (11) **2796** (13) **A**
G02F 1/00
- (21) **AM20130119** (22) **09.08.2013**
- (71) Էդուարդ Հարությունյան (AM)
- (72) Էդուարդ Հարությունյան (AM), Մերի Հովհաննիսյան (AM)
- (73) Էդուարդ Հարությունյան, 0031, Երևան, Զոհրապի 115 (AM)
- (54) **Լույսի փնջի ճեղքման եղանակ**
- (57) Գյուտը վերաբերում է լույսի փնջի ճեղքմանը և կարող է կիրառվել օպտիկական կապի ոլորտում, լույսի մոդուլարարներում, դեֆլեկտորներում և

այն սարքերում, որտեղ օգտագործում են կառավարվող պարամետրերով և դիրքով լույսի փնջեր:

Ըստ եղանակի լույսի փունջն ուղղում են ակուստատիկական միջավայրի վրա: Պիեզոտարրի միջոցով գրգռում են կանգուն ակուստիկական տատանումներ: Լույսի փունջն անցկացնում են ակուստիկական տատանումների հատման տիրույթով: Ապահովում են Ռաման-Նատի դիֆրակցիա:

Պարզեցվում է լույսի փնջի ճեղքման եղանակը, ակուստիկական փոքր հզորությունների օգտագործմամբ ստացվում են մեծ քանակի կառավարելի փնջեր, 11 նկ.:

Արտոնագրաունակության մասին գործակալության եզրակացությունները

- (51) (2013.01) (11) 1698 (13) B
B08B 9/00
- (21) AM20050016 (22) 23.02.2005
- (71) ԷՌ Դուբլին Ե Նուբեմ ԳմբՀ (DE)
- (72) Դր. Բերնհարդ Խրիստ (DE), Հոլգեր Վիթինգ (DE), Ռոնալդ Ռիք (DE)
- (73) Նուբեմ Թեքնոլոջիս ԳմբՀ (DE)
- (54) **Ցիստեռնից նստվածքի հեռացման կայանք և եղանակ**
- (57)

1. Ցիստեռնից նստվածքի հեռացման կայանք, նստվածքի վրա կուտակված հեղուկի առկայության դեպքում, որն ունի ցիստեռնի վերին պատի անցքով ցիստեռնի մեջ ներդրված տեղաշարժվելու հնարավորություն ունեցող շարժասայլակ, շարժասայլակն ունի հեղուկ մղող առնվազն մեկ ծայրափողակ, որը պոմպի միջոցով կապված է հեղուկի մատուցման աղբյուրի հետ, ցիստեռնից հեղուկի և նստվածքի մասնիկների խառնուրդը հեռացնող արտածծիչ, կայանքն ունի մատուցվող հեղուկի տաքացման ու ջերմաստիճանի կարգավորման սարք և(կամ) հեղուկի pH-ի մեծությունը կարգավորման սարք. *փարբերվում է նրանով*, որ ցիստեռնի վերին պատի անցքի վերևում տեղադրված է «տաք խուց», որի միջից անցքով անցնում է շարժասայլակի հետ կապված ձգող հարմարանքը՝ շարժասայլակը անցքի միջով ցիստեռնի մեջ ներդնելը և ցիստեռնից դուրս հանելը իրականացնելու համար, իսկ պոմպը տեղադրված է նստվածքի վրա կուտակված հեղուկի հաստաշերտի մեջ:

2. Կայանքն ըստ 1-ին կետի. *փարբերվում է նրանով*, որ մատուցվող հեղուկի տաքացման և ջերմաստիճանի կարգավորման սարքը ուղղահոս ջեռուցիչ է:

3. Կայանքն ըստ 1-ին կամ 2-րդ կետի. *փարբերվում է նրանով*, որ ցիստեռնի մեջ շարժասայլակի տեղաշարժման շարժաբերը պնևմատիկ է:

4. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շարժասայլակը երկայնական առանցքի երկայնքով պատված է սնամեջ գլանաձև պատյանով, որի արտաքին տրամագիծը $d \leq 1000$ մմ:

5. Կայանքն ըստ 1-3-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շարժասայլակը երկայնական առանցքի երկայնքով պատված է սնամեջ գլանաձև պատյանով, որի արտաքին տրամագիծը գերադասելիորեն $d \leq 530-600$ մմ:

6. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ «տաք խուցը» տեղադրված է պաշտպանիչ շերտի վրա, որն ունի ցիստեռնի անցքին համառանցք անցք, այդ անցքին համառանցք պատի վրա տեղադրված է ցիստեռնի անցքի տրամագծին հավասար տրամագիծ ունեցող ուղղորդիչ խողովակ:

7. Կայանքն ըստ 6-րդ կետի. *փարբերվում է նրանով*, որ պաշտպանիչ շերտը բետոնե պատ է:

8. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. տարբերվում է նրանով, որ «տաք խուցն» ունի երկրորդ անցք, որը հաղորդակցված է երկրորդ ուղղորդիչ խողովակի հետ:

9. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շարժասայլակի ձգող հարմարանքը, հեղուկի և ճնշման տակ օդի մատուցման խողովակաշարերը և պոմպը միակցված են իրար:

10. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շարժասայլակի տեղաշարժի շարժաբերը երկու շղթայավոր շարժաբերներ են, որոնցից յուրաքանչյուրն ունի անվերջ շղթայի հետ կառչման մեջ գտնվող առանձին տանող շղթայանիվ:

11. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ յուրաքանչյուր շղթայավոր շարժաբերի աշխատանքն իրականացված է մեկը մյուսից անկախ:

12. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շղթաների միջև եղած հեռավորությունը փոփոխական է:

13. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շղթայի հարևան օղակների միջև տեղադրված են դեպի դուրս ցցված հարթ տարրեր:

14. Կայանքն ըստ նախորդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շարժասայլակի ճակատային մասում հողա-

կապորեն տեղադրված են շաժասայլակի համա-
չափության երկայնական առանցքին ուղղա-
հայաց և տանող շղթայանիվների պտտման
առանցքին զուգահեռ առանցքի շուրջը պտտման
հնարավորություն ունեցող բլոկ կազմող մի շարք
ծայրափողակներ, որոնք կապված են պնևմա-
տիկ շարժաբերի հետ:

15. Կայանքն ըստ նախորդ կետերից ցան-
կացածի. *փարբերվում է նրանով*, որ արտաձծիչը
անշարժ տեղադրված է շարժասայլակի վրա,
դրա ներքաշող ծայրը գտնվում է շարժասայլակի
ճակատային մասում և ուղղված է դեպի շարժա-
սայլակի հենման մակերևույթը, ընդ որում ծայ-
րափողակների դեպի շարժասայլակի հեն-
ման մակերևույթ ուղղված դիրքում արտաձծիչը
գտնվում է դրանց և շարժասայլակի ճակատային
մասի միջև:

16. Կայանքն ըստ նախորդ կետերից ցան-
կացածի. *փարբերվում է նրանով*, որ արտաձծիչը
խողովակ է, որի ներքաշող ծայրը ծածկված է
ձակոտկեն թիթեղով:

17. Կայանքն ըստ նախորդ կետերից ցան-
կացածի. *փարբերվում է նրանով*, որ շար-
ժասայլակի եզրաչափերն ընդունված են՝
երկարությունը $L = 800-1200$ մմ, լայնությունը $B = 350-550$ մմ
և բարձրությունը $H = 300-500$ մմ:

18. Կայանքն ըստ 1-16-րդ կետերից
ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ
շարժասայլակի եզրաչափերը ընդունված են՝
երկարությունը $L \sim 900$ մմ, լայնությունը՝ $B \sim 460$
մմ և բարձրությունը՝ $H \sim 400$ մմ:

19. Կայանքն ըստ նախորդ կետերից ցան-
կացածի. *փարբերվում է նրանով*, որ շար-
ժասայլակին կապված է լողան:

20. Կայանքն ըստ նախորդ կետերից
ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ
ցիստեռնի վերին մասում կա հեղուկի մակ-
երևույթին ուղղված տեսախցիկ, որը կապ-
ված է ձգող հարմարանքին կամ ցիստեռնի մեջ
իջեցված ճոպանին:

21. Կայանքն ըստ նախորդ կետերից ցան-
կացածի. *փարբերվում է նրանով*, որ ծայրա-
փողակները, արտաձծիչի ներքաշող ծայրը
ծածկող ձակոտկեն թիթեղը և(կամ) հեղուկի
մատուցման խողովակաշարի արմունկները
պատրաստված են թուջից կամ պատված են
նիտրիլային կաուչուկով:

22. Ցիստեռնից նստվածքի հեռացման
եղանակ, նստվածքի վրա կուտակված հե-
ղուկի առկայության դեպքում, ըստ որի ցի-
ստեռնի վերին պատի անցքով նստվածքի վրա
ներդնում են առնվազն մեկ ծայրափողակ
ունեցող շարժասայլակ, որին հաղորդում են
ցիստեռնի մեջ նստվածքի վրայով տեղա-
շարժ, ծայրափողակներին մատուցում են
հեղուկ և ուղղում նստվածքի վրա, հեղուկի և
նստվածքի մասնիկների խառնուրդը հեռացնում
են արտաձծիչով, ընդ որում մատուցվող հեղուկը
տաքացնում են մինչև պահանջվող ջերմաս-
տիճանը և կարգավորում դրա pH-ի մեծությունը.
փարբերվում է նրանով, որ շարժասայլակը
ներդնում են ցիստեռնի մեջ հավաքված վիճակում,
իսկ պոմպը տեղադրում են նստվածքի վրա
կուտակված հեղուկի հաստաշերտի մեջ:

23. Եղանակն ըստ 22-րդ կետի. *փարբերվում է
նրանով*, որ նստվածքի մասնիկներ պարունակող
հեղուկը դուրս են բերում շրջանառությունից,
երբ պինդ նյութի պարունակությունը հասնում է
 $C = 100-130$ գ/լ:

24. Եղանակն ըստ 22-րդ կետի. *փարբերվում է
նրանով*, որ նստվածքի մասնիկներ պարունակող
հեղուկը դուրս են բերում շրջանառությունից,
երբ պինդ նյութի պարունակությունը հասնում
է ~ 115 գ/լ:

25. Եղանակն ըստ 22 - 24-րդ կետերից
ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ
շրջանառության մեջ գտվող հեղուկի ջերմ-
աստիճանը կարգավորում են՝ $T = 30-70^{\circ}\text{C}$
սահմաններում:

26. Եղանակն ըստ 22 - 24-րդ կետերից
ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ
շրջանառության մեջ գտվող հեղուկի ջերմ-
աստիճանը կարգավորում են $T = 45-65^{\circ}\text{C}$
սահմաններում:

27. Եղանակն ըստ 22 - 24-րդ կետերից
ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ
շրջանառության մեջ գտնվող հեղուկի ջերմ-
աստիճանը $\sim 60^{\circ}\text{C}$ է:

28. Եղանակն ըստ 22 - 27-րդ կետերից
ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ հեղուկը
շրջանառության մեջ են դնում ճնշման տակ՝
որը գերազանցում է մթնոլորտային ճնշումը
 $P = 1,5 \times 10^5 - 3 \times 10^5$ Պա:

29. Եղանակն ըստ 22 - 27-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ հեղուկը շրջանառության մեջ են դնում ճնշման տակ՝ որը գերազանցում է մթնոլորտային ճնշումը՝ $\sim 2 \times 10^5$ Պա:

30. Եղանակն ըստ 22 - 29-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ պոմպի հեղուկի մղման ծավալային արտադրողականությունը ընդունված է $V \geq 15$ մ³ / ժամ:

31. Եղանակն ըստ 22 - 29-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ պոմպի հեղուկի մղման ծավալային արտադրողականությունը ընդունված է $V \geq 20$ մ³ / ժամ:

32. Եղանակն ըստ 22-րդ կետի. *փարբերվում է նրանով*, որ նստվածքը հեռացնում են այնպես, որ սկզբում դրանց հեռացման արդյունքում առաջանան կոնաձև և(կամ) խառնարանաձև փոսիկներ և դրանց հետագա մեծացմամբ մեծանա ցիստեռնի հատակի նստվածքից ազատված մակերեսը:

33. Եղանակն ըստ 22 - 32-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ

նստվածքում կոնաձև և(կամ) խառնարանաձև փոսիկների առաջացման համար շարժասայլակը շարժում են ծանրության ուժով պայմանավորված՝ ուղղաձիգ կամ մոտավորապես ուղղաձիգ ուղղությամբ:

34. Եղանակն ըստ 22 - 33-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շրջանառության մեջ հոսող հեղուկի pH-ի մեծությունը ընտրում են $pH > 7$:

35. Եղանակն ըստ 22 - 33-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շրջանառության մեջ հոսող հեղուկի pH-ի մեծությունը ընտրում են $pH = 9-14$:

36. Եղանակն ըստ 22 - 33-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ շրջանառության մեջ հոսող հեղուկի pH-ի մեծությունը ընտրում են $pH = 11-12$:

37. Եղանակն ըստ 22 - 36-րդ կետերից ցանկացածի. *փարբերվում է նրանով*, որ նստվածքի հեռացման համար նրա մակերևույթից պոկում են հարթ կամ կորաձև տարրեր:

(74) Հ. Դավթյան

**ՕԳՏԱԿԱՐ
ՄՈԴԵԼՆԵՐ**

Օգտակար մոդելներին վերաբերող մատենագիտական տվյալների նույնականացման միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.9 ստանդարտի

11	արտոնագրի համարը
13	փաստաթղթի տեսակի կոդը U օգտակար մոդելի արտոնագիր
21	հայտի համարը
22	հայտի ներկայացման թվականը
23	ցուցահանդեսային առաջնության թվականը
31	առաջին հայտի համարը
32	առաջին հայտի ներկայացման թվականը
33	երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
45	օգտակար մոդելի արտոնագիր տալու մասին տեղեկությունների հրապարակման թվականը
51	միջազգային արտոնագրային դասակարգման (ՄԱԴ) ցուցիչը(ները)
54	օգտակար մոդելի անվանումը
56	տեղեկատվության աղբյուրներ
57	օգտակար մոդելի ռեֆերատը կամ հավակնության սահմանումը
62	ավելի վաղ ներկայացված հայտի համարը և ներկայացման թվականը, որից զատված է տվյալ հայտը
71	հայտատուն, երկրի կոդը
72	օգտակար մոդելի հեղինակը (ները), երկրի կոդը
73	արտոնագրատերը, հասցեն, երկրի կոդը
74	արտոնագրային հավատարմատար
85	միջազգային հայտի (PCT) ազգային փուլ փոխադրման թվականը
86	միջազգային հայտի (PCT) համարը և ներկայացման թվականը
87	միջազգային հայտի (PCT) հրապարակման համարը և թվականը

Տեղեկություններ տրված արտոնագրերի մասին

(51) **(2013.01)** (11) **341** (13) **Ս**
A23C 19/00

- (21) **AM20130121U** (22) **15.08.2013**
- (71) Աշոտ Օհանյան (AM), Ռուզաննա Նահապետյան (AM)
- (72) Աշոտ Օհանյան (AM), Ռուզաննա Նահապետյան (AM)
- (73) Աշոտ Օհանյան, 0070, Երևան, Աղյուսագործների 2-րդ, 75/1 (AM), Ռուզաննա Նահապետյան, 0033, Երևան, Վ. Համբարձումյան 97 շենք, բն. 38 (AM)

(54) Հորած պանիր

(57) Օգտակար մոդելը վերաբերում է կաթնարդյունաբերությանը, մասնավորապես՝ հորած պանիրներին:

Հորած պանիրը ներառում է 3:7 հարաբերակցությամբ վերցրած ոչխարի և կովի կաթի խառնուրդից ստացված պանիր, չորացրած եղեսպակ, կտրտած չորացրած կարմիր քաղցր պղպեղ, չորացրած ցիտրոն, բաղադրամասերի հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ.%) պանիր՝ 84-92, չորացրած եղեսպակ՝ 2-4, կտրտած չորացրած կարմիր քաղցր պղպեղ՝ 3-4, ցիտրոն՝ 3-4:

Ընդլայնվում է հորած պանիրների տեսականին և բարձրացվում սննդային և կենսաբանական արժեքը:

(51) **(2013.01)** (11) **342** (13) **Ս**
A47C 21/00
B68G 7/00

- (21) **AM20130123U** (22) **26.08.2013**
- (71) Հայկ Արտյուշայի Սանոսյան (AM)
- (72) Հայկ Արտյուշայի Սանոսյան (AM)
- (73) Հայկ Արտյուշայի Սանոսյան, Երևան, Ռոստոմի 29, բն. 144 (AM)

(54) Ներքնակի պրոֆիլակտիկ ծածկոց

(57) Օգտակար մոդելը վերաբերում է մարդու կենսական պահանջմունքները բավարարող պարագաներին, մասնավորապես՝ ներքնակի պրոֆիլակտիկ ծածկոցի կառուցվածքին:

Ներքնակի պրոֆիլակտիկ ծածկոցն ունի ներքին ծավալ առաջացնող վերին և ստորին

պատեր, ինչպես նաև ներքնակի պրոֆիլակտիկ ծածկոցը ներքնակին սևեռող միջոցներ: Ներքնակի պրոֆիլակտիկ ծածկոցը կատարված է ուղղանկյան տեսքով: Այն պատրաստված է ջրամերժ գործվածքից՝ բյազից, իսկ դրա ներքին ծավալը լցված է լցանյութի շերտով՝ վուշե խճուճով, լցանյութի հաստությունը կազմում է 0,5-2,0 սմ: Սևեռող միջոցները կատարված են ներքնակի պրոֆիլակտիկ ծածկոցի վերին պատի յուրաքանչյուր անկյունում ամրակցված կապելու քուղերի տեսքով, ընդ որում կապելու քուղերը ամրակցված են ներքնակի երեսին դրա անկյուններից անկյունագծով 10-15 սմ հեռավորության վրա:

Ընդլայնվում է սանիտարահիգիենիկ և պրոֆիլակտիկ նշանակության մանածագործվածքային պատրաստվածքների տեսականին, 3 նկ.:

(51) **(2013.01)** (11) **343** (13) **Ս**
C12G 3/00

- (21) **AM20130104U** (22) **11.07.2013**
- (71) Մանվել Սուքոյան (AM), Կարեն Նորիկի Կազումյան (AM)
- (72) Կարեն Կազումյան (AM), Մանվել Սուքոյան (AM)
- (73) Մանվել Սուքոյան, 4003, Տավուշի մարզ, գյուղ Ակնաղբյուր (AM), Կարեն Կազումյան, 0010, Երևան, Վարդանանց 2-րդ նրբ. 6, բն. 3 (AM)

(54) Բրենդի

(57) Օգտակար մոդելը վերաբերում է գինեգործությանը, մասնավորապես՝ բրենդիին:

Բրենդին պարունակում է 1:1 ծավալային հարաբերակցությամբ մասրենու ծաղիկների և նարնջի կեղևի՝ վայրի սալորի 65- 68%-անոց սպիրտային թուրմերի խառնուրդ, 1:4 հարաբերակցությամբ վերցրած մասրենու չորացրած պտուղների ջրային թուրմ: Բաղադրամասերը վերցված են հետևյալ հարաբերակցությամբ (զանգվ. %). սպիրտային թուրմերի խառնուրդ՝ 70.5-73.3, մասրենու չորացրած պտուղների ջրային թուրմ՝ 26.0-26.5, ջուր՝ մնացածը, մինչև բրենդիի 45% թնդություն:

Բարձրանում է բրենդիի որակը:

(51) (2013.01) (11) 344 (13) Ս
E02D 29/00

(21) AM20130095U (22) 04.07.2013

(71) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն (AM)

(72) Վալտեր Աթանեսյան (AM), Վահան Հարությունյան (AM)

(73) «Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպություն, 0009, Երևան, Տերյան 105 (AM)

(54) **Կաղապարամած արտաքին եռաշերտ պատերի կառուցման համար**

(57) Օգտակար մոդելը վերաբերում է շինարարության բնագավառին և կարող է օգտագործվել ջերմամեկուսիչ շերտով միաձույլ արտաքին եռաշերտ երկաթբետոնե պատերի կառուցման համար:

Արտաքին եռաշերտ պատերի կառուցման կաղապարամածը ունի երկու կաղապարամածային վահաններ և ջերմամեկուսիչ

սալերի դիրքավորման միմյանց հանդիպակաց տեղակայված զույգ ուղղորդներ: Հանդիպակաց ուղղորդները զույգված են և միակցված են իրար հորիզոնական կապերի միջոցով՝ կազմելով ուղղորդների կապոցներ: Ջերմամեկուսիչ սալերի չափսերին համապատասխան իրարից պահանջվող հեռավորության վրա տեղադրված են կաղապարամածային վահանները իրար կապող հեծանների վրա: Հեծանների և կաղապարամածային վահանների վրա կատարված են անցքեր: Հեծանների միացումը կաղապարամածային վահաններին և կապոցների միացումը հեծաններին իրականացված է այդ անցքներում տեղակայման հնարավորությամբ կատարված մատերի միջոցով: Կապոցների մատերի տրամագծերը կատարված են աստիճանավոր:

Ընդլայնվում է տեղափոխովի կաղապարամածների օգտագործման հնարավորությունները բազմաշերտ պատերի կառուցման ժամանակ, 3 նկ.:

**ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ
ՆՄՈՒՇՆԵՐ**

**Արդյունաբերական նմուշներին վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.80 ստանդարտի**

11	<i>վկայագրի համարը</i>
13	<i>փաստաթղթի տեսակի կոդը S արդյունաբերական նմուշի վկայագիր</i>
21	<i>հայտի համարը</i>
22	<i>հայտի ստացման թվականը</i>
23	<i>ցուցահանդեսային առաջնության թվականը</i>
24	<i>գրանցման թվականը</i>
31	<i>առաջնային հայտի համարը</i>
32	<i>առաջնային հայտի ներկայացման թվականը</i>
33	<i>երկրի կոդը, որտեղ ներկայացվել է առաջնային հայտը</i>
51	<i>արդյունաբերական նմուշների միջազգային դասակարգման (ԱՆՄԴ) ցուցիչը (ները)</i>
54	<i>արդյունաբերական նմուշի անվանումը</i>
55	<i>արդյունաբերական նմուշի պատկերը (գծանկարը, լուսանկարը)</i>
71	<i>հայտատուն(ները), երկրի կոդը</i>
72	<i>հեղինակը(ները), երկրի կոդը</i>
73	<i>իրավատերը(երը), հասցեն, երկրի կոդը</i>
74	<i>արտոնագրային հավատարմատար</i>

Տեղեկություններ գրանցված արդյունաբերական նմուշների մասին

(51) **09-03** (11) **318** (13) **S**
09-05

(21) **20130026** (22) **26.07.2013**

(71) Արմեն Սեդրակի Ղալթաղսագյան (AM)

(72) Արմեն Ղալթաղսագյան (AM)

(73) Արմեն Սեդրակի Ղալթաղսագյան, Երևան,
Վրացական 4 նրբ., 5-31 (AM)

(54) **Ձվի տեսքով տարա քաղցրավենիքի
համար (2 տարբերակ)**

(55)



1.1



1.2



1.3



2.1



2.2



2.3

- (51) 20-01 (11) 319 (13) S
- (21) 20130022 (22) 18.05.2013
- (71) «Նյուվենդ» ՍՊԸ (AM)
- (72) Էդուարդ Մելքոնյան (AM)
- (73) «Նյուվենդ» ՍՊԸ (AM)
- (74) Ռ. Մանասերյան
- (54) **Տաք և սառը ըմպելիքների վաճառքի ավտոմատի պատյան**
- (55)



1.1



1.2



1.3



1.4

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՆՇԱՆՆԵՐ

ТОВАРНЫЕ ЗНАКИ

**Ապրանքային և սպասարկման նշանների վերաբերող
մատենագիտական տվյալների նույնականացման
միջազգային կոդերը ըստ ՄՍՀԿ ST.60 ստանդարտի**

111	գրանցման հերթական համարը
151	գրանցման թվականը (հանրահայտ ճանաչման թվականը)
152	թվականը, որից սկսած նշանը հանրահայտ է
181	գրանցման գործողության ենթադրյալ ավարտը
210	հայտի համարը
220	հայտի ներկայացման թվականը
230	ցուցահանդեսային կամ այլ առաջնության թվականը
310	առաջին հայտի համարը
320	կոնվենցիայով առաջնության թվականը
330	երկրի կողը, որտեղ ներկայացվել է առաջին հայտը
442	հայտի հրապարակման թվականը
511	ապրանքների և (կամ) ծառայությունների ցանկը
526	չպահպանվող տարրեր
540	ապրանքային նշանը
551	կոլեկտիվ կամ հավաստագրային նշան
554	ծավալային նշան
555	հոլոգրաֆիական նշան
556	ձայնային նշան
591	գույնը և գունային համակցությունը
646	իրավաբանորեն փոխկապակցված այլ գրանցման համարը և թվականը
730	նշանի իրավատերը, հասցեն, երկրի կոդը
740	արտոնագրային հավատարմատար


Տեղեկություններ գրանցված ապրանքային և սպասարկման նշանների մասին

(210) **20121676** (111) **20688**
(220) **11.12.2012** (151) **02.12.2013**
(181) **11.12.2022**
(730) Մերի Քեյ Ինք., Դելավերի նահանգ, US
(442) 17.01.2013
(540)

Mary Kay Lash Intensity

(526) «Lash intensity» արտահայտությունն ինքն-
ուրույն պահպանության օբյեկտ չէ:
(511)
դաս 3. օժանելիքակոսմետիկական արտա-
դրանք, կոսմետիկական միջոցներ:
(740) Ալ. Նահապետյան

(210) **20121750** (111) **20689**
(220) **26.12.2012** (151) **02.12.2013**
(181) **26.12.2022**
(730) «Լայմ» ՍՊԸ, Երևան, Արցախի պող. 14-155, AM
(442) 03.04.2013
(540)



(511)
դաս 3. սպիտակեցնող պատրաստուկներ
և այլ նյութեր լվացքի համար, պատրաստուկներ
մաքրման, ողորկման (փայլեցման), ճարպա-
զերծման և հղկամշակման համար. օճառներ.
օժանելիք, եթերային յուղեր, կոսմետիկական
միջոցներ, լոսյոններ մազերի համար. ատամի
փոշիներ և մածուկներ.
դաս 5. հիգիենիկ պատրաստուկներ բուժա-
կան նպատակների համար. դիետիկ սնունդ
և նյութեր բուժական կամ անասնաբուժական
նպատակների համար, դիետիկ հավելումներ
մարդկանց և կենդանիների համար. մանկական
սնունդ. սպեղանալաթեր, վիրակապման նյութեր.

դաս 8. ձեռքի գործիքներ. դանակավոր
իրեր. պատառաքաղներ և գդալներ. սառը զենք.
ածելիներ.

դաս 9. էլեկտրականության միացման
սարքեր և գործիքներ. մագնիսական տեղեկա-
կիրներ. ձայնագրման սկավառակներ. կոմպակտ
սկավառակներ, DVD-ներ և տեղեկատվության
թվային այլ կրիչներ. հաշվիչ մեքենաներ.

դաս 16. թուղթ, սովարաթուղթ և դրանցից
պատրաստված իրեր, որոնք ընդգրկված չեն այլ
դասերում. տպագրական արտադրանք. նյութեր
կազմարարական աշխատանքների համար.
լուսանկարներ. թղթագրենական պիտույքներ.
կաշուն նյութեր գրասենյակային կամ կենցաղային
նպատակների համար. պիտույքներ նկարիչների
համար. վրձիներ. գրասենյակային պիտույքներ
(բացառությամբ կահույքի). ուսուցողական նյութեր
և դիտողական ձեռնարկներ (բացառությամբ
սարքավորումների). պլաստմասսայե նյութեր
փաթեթավորման համար, որոնք ընդգրկված
չեն այլ դասերում. տառաշարեր. տպագրական
կլիշեներ.

դաս 17. ռետին, գուտապերչ, փայլար և
այդ նյութերից պատրաստված իրեր, որոնք
ընդգրկված չեն այլ դասերում. մասնակի
մշակված պլաստմասսայից իրեր. խծուծման.
խցման և մեկուսացման նյութեր. ոչ մետաղյա
ճկուն խողովակներ.

դաս 20. նկարների շրջանակներ. փայտից,
խցանից, այդ նյութերի փոխարինիչներից կամ
պլաստմասսայից պատրաստված իրեր, որոնք
ընդգրկված չեն այլ դասերում.

դաս 21. տնային կամ խոհանոցային կահ-
կարասի և սպասք. սանրեր և սպունգներ.
խոզանակներ (բացառությամբ նկարչական
վրձիների) և դրանց պատրաստման նյութեր.
իրեր մաքրման նպատակների համար. ապակյա,
հախճապակյա և ճենապակյա իրեր, որոնք
ընդգրկված չեն այլ դասերում.

դաս 28. խաղեր և խաղալիքներ. մարմնա-
մարզական և սպորտային իրեր, որոնք
ընդգրկված չեն այլ դասերում. տոնածառի
զարդեր.

դաս 29. պահածոյացված բակլա. պահածոյացված ոլոռ. պահածոյացված սունկ. երշիկեղեն. չամիչ. արյունեփ երշիկ. մսային պահածոներ. ձկնային պահածոներ. պահածոյացված սոխ. թթու դրած կտրատած բանջարեղեն կծու համեմունքներով. կաթ. միս. պահածոյացված միս. պահածոյացված բանջարեղեն. չորացած բանջարեղեն. պահածոյացված ձիթապտուղ. լոլիկի մածուկ, շաքարի օշարակի մեջ եփած պտուղներ կամ հատապտուղներ. խոզի ազդրից աղի մթերք. կաթնեղեն. ձկնեղեն. թթված կաթ. խեցգետնանմաններ (ոչ կենդանի). ձուկ (ոչ կենդանի). պահածոյացված ձուկ. բանջարեղենային աղցաններ. ճարպ. սարդինա. ծովատառեխ. աղը դրած միս. չորահացով պատված նրբերշիկ. պանիրներ. ձկան ֆիլե. կարտոֆիլի փաթիլներ. կարտոֆիլի չիպսեր. ձու.

դաս 30. բիսկվիտներ. նրբաբլիթներ. բուլկի. վաֆլի. վերմիշել. բրնձի հիմքով թեթև խորտիկներ. հացահատիկային բոյսերի հիմքով թեթև խորտիկներ. դոնդողանման հրուշակեղեն. քաղցր խմորից հրուշակեղեն՝ առավելապես միջուկով. հրուշակեղեն գետնընկույզի հիմքով. հրուշակեղեն նշի հիմքով. մակարոնեղեն. կարկանդականման մթերք. սառեցրած յոգուրտ. կակաո, կակաոյի հիմքով մթերք. կարամել. կաթով շիլաներ. կոնֆետներ, մատուտակի կոնֆետներ, անանուխի կոնֆետներ. սուրճ, սուրճի հումք. կրեկերներ. եգիպտացորենի ձավար, աղացած եգիպտացորեն, բոված եգիպտացորեն. ալյուրով պատրաստված ուտելիք. լապշա. բնական կամ արհեստական սառույց. կերակրի սառույց. սառնաշաքար. մեղր. պաղպաղակ, մրգային պաղպաղակ. ալյուր. անանուխ քաղցրավենիքի համար. կակաոյի հիմքով ըմպելիքներ, որոնք պարունակում են կաթ. սուրճի հիմքով ըմպելիքներ, որոնք պարունակում են կաթ. սրճային ըմպելիքներ. թեյի հիմքով ըմպելիքներ. շոկոլադի հիմքով ըմպելիքներ, որոնք պարունակում են կաթ. շոկոլադային ըմպելիքներ. կակաո-ըմպելիքներ. մանրացված վարսակ. մաքրած վարսակ. տաքդեղ. թխվածքաբլիթ. կարկանդակներ. պիցա. եգիպտացորենի փաթիլներ (ադիբուդի). փոշիներ պաղպաղակի համար. համեմունքներ (ամոքանք). հացահատիկային մթերք. ալրային մթերքներ. վարսակի հիմքով մթերք. ակնամոմ. քաղցրաբլիթ. համեմունքներ (համեմանք). պուդինգներ. փոշի քաղցր կաթնահունց խմորից

պատրաստված հրուշակեղենի համար. բրինձ. շաքար. քաղցր կաթնահունց խմոր հրուշակեղենի համար. քաղցրեղեն. սպագետտի. համեմունքներ. չորահաց. պաքսիմատ. սենդվիչներ. թաբուլե. նշով խմոր. մրգա-հատապտղային տորթեր. պահածոյացված բանջարանոցային խոտեր (համեմունքներ). ուտելի զարդարանքներ քաղցր կաթնահունց խմորից պատրաստված հրուշակեղենի համար. հալվա. հաց. հաց առանց թեխմորի, փաթիլներ հացահատիկային մթերքից. թեյ. թեյ սառույցով. շոկոլադ.

դաս 31. բակլա. ոլոռ. սունկ. հատիկաբույսերի չմշակված սերմնահատիկներ. ցորեն (հատիկաբույսեր). կերի ցորեն. եգիպտացորեն. քնջուր. գեյթուն. ձիթապտուղ. վարսակ. ցորենի թեփ. ցորեն, չմշակված բրինձ, եղերդ (ցիկորի, աղցան), հատապտուղներ. գիհու հատապտուղներ.

դաս 32. բաղադրություններ գազավորված ջուր պատրաստելու համար. բաղադրություններ հանքային ջուր պատրաստելու համար.

դաս 33. գինի. գինի խաղողի կճեռից.

դաս 34. մոխրամաններ. լուցկու տուփեր. լուցկի:

- (210) **20130240** (111) **20690**
- (220) **26.02.2013** (151) **02.12.2013**
- (181) **26.02.2023**

- (730) Զարուհի Պետրոսյան, Երևան, Սարյան փող., 16 շ., բն. 62, AM
- (442) 20.03.2013
- (540)



- (526) «YOGA» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:
- (591) Ապրանքային նշանը պահպանվում է սև և կարմիր գունային համակցությամբ:
- (511)

դաս 41. կրթություն (դաստիարակություն, ուսուցում). ուսումնական գործընթացի ապահովում, զվարճություններ. մարզական և մշակութային միջոցառումների կազմակերպում:

(210) **20130313** (111) **20691**
 (220) **14.03.2013** (151) **02.12.2013**
 (181) **14.03.2023**

(730) Էվոլյուշն Ֆրեշ, Ինք., Դելավեր նահանգի կորպորացիա, US
 (442) 05.06.2013

(540)
EVOLUTION FRESH

(511)
 դաս 32. մրգային հյութեր. մրգային և հյութի հիմքով ըմպելիքներ. մրգային ըմպելիքներ և մրգային հյութեր պարունակող զովացուցիչ ըմպելիքներ. սառեցված մրգային ըմպելիքներ և մրգային հիմքով սառեցված ըմպելիքներ. մրգային խտանյութեր և խյուսեր, որոնք օգտագործվում են որպես ըմպելիքների բաղադրամասեր. ըմպելիքների խտանյութեր և օշարակներ սառեցված ըմպելիքային խառնուրդներ պատրաստելու համար. մրգերի և հյութի հիմքով փրփրուն ըմպելիքներ և գազավորված ըմպելիքներ, բանջարեղենային-մրգային հյութեր. բանջարեղենի հիմքով ըմպելիքներ. բանջարեղենի հյութեր պարունակող ըմպելիքներ. հեղուկ և փոշիացված ըմպելիքների խառնուրդներ. անուշահամ մրգահյութեր թեյի և խոտաբույսային թեյի հիմքով ըմպելիքներ պատրաստելու համար. ջուր, հանքային ջուր, գազավորված ջուր, վիտամիններով խմելու ջուր, և այլ ոչ ալկոհոլային խմիչքներ. զովացուցիչ ըմպելիքներ. մրգահյութով գազավորված ըմպելիքներ. ըմպելիքներ պատրաստելու համար անուշահամ մրգահյութեր. անուշահամ և առանց համի շշացված ջրեր. էներգետիկ ըմպելիքներ. սոյայի հիմքով ըմպելիքներ, որոնք չեն հանդիսանում կաթի փոխարինիչներ. սոյայով ըմպելիքներ սոյայի հիմքով ըմպելիքներ. ընկուզային կաթ և ընկուզային հյութ.

դաս 43. ռեստորան, սրճարան, կաֆետերիա (ինքնասպասարկումով ճաշարան), խորտկարան, առաքումով ռեստորաններ, պատվերը դուրս տանելու ռեստորաններ. քեյթրինգ (սննդի կազմակերպման ծառայություն, ռեստորանային սպասարկման ծառայություն). պայմանագրային քեյթրինգ. սննդի պատրաստում. պատվերը դուրս տանելու ռեստորանների ծառայություններ:
 (740) 2. Մանուկյան

(210) **20130353** (111) **20692**
 (220) **20.03.2013** (151) **02.12.2013**
 (181) **20.03.2023**

(730) Սթարբաքս Քորփորեյշն (գործող ինչպես Սթարբաքս Քոֆի Քամփնի), Վաշինգտոնի նահանգ, US
 (442) 05.06.2013

(540)
VERISMO

(511)
 դաս 7. էլեկտրական սրճադաշններ կենցաղային կամ առևտրային (կոմերցիոն) նպատակներով օգտագործման համար, կաթի էլեկտրական փրփրիչներ.

դաս 11. էլեկտրական սարքավորումներ, մասնավորապես՝ էսպրեսո պատրաստիչներ և սրճեփներ կենցաղային կամ առևտրային (կոմերցիոն) նպատակով օգտագործելու համար.

դաս 16. սրճեփների թղթյա գտիչներ, թղթյա անձեռոցիկներ, թղթյա բաժակներ. բաժակի թղթյա տակդիրներ, թղթյա պարկեր, թղթյա բաժակակալներ, թղթյա տուփեր և պարագաներ փաթեթավորման համար, ուսուցողական բուկլետներ.

դաս 21. ձեռքի սրճադաշններ և սուրճ մանրացնող սարքեր, սուրճի և ըմպելիքների ջերմապահ բաժակներ, սուրճի բազմակի օգտագործման ոչ թղթյա գտիչներ, բաժակի ոչ թղթյա տակդիրներ, ջերմապահ վակուումային շշեր, սուրճի բաժակներ, թեյի բաժակներ և գավաթներ, ապակյա սպասք, ճաշատեսակներ մատուցելու ափսեներ, ափսեներ և թասեր, սպասքի տակդիրներ, պահեստավորման տարաներ, ոչ էլեկտրական կաթիլային զտման եղանակով սուրճ պատրաստող սարքեր, ոչ էլեկտրական մխոցային սրճեփներ, մթերքի պահպանման համար նախատեսված ղեկորատիվ տարաներ, ոչ էլեկտրական թեյնիկներ, թեյի թուրմ պատրաստելու ցանցեր, թեյնիկներ, թեյի քամիչներ, ոչ թանկարժեք մետաղներից մոմակալներ. ոչ թանկարժեք մետաղներից աշտանակներ. կերամիկական արձանիկներ. ճենապակյա արձանիկներ. ոչ էլեկտրական կաթի փրփրիչներ, բահիկներ և շերեփներ.

դաս 29. չորացված կաթի փոշի, փոշիացված կաթ, կաթ, անուշահոտ հավելումներով կաթ, կաթնային հարուկներ (շեյքեր) և կաթի հիմքով ըմպելիքներ, մրգային ջեմեր, մրգային թանձրուկներ, դոնդոլներ, սփրեյներ (մածուկներ), կանթնաշոռեր և պահածոներ.

դաս 30. սուրճ. աղացած և հատիկավոր սուրճ, կակաո, թեյ և խոտաբույսային թեյ. սուրճից, թեյից, կակաոյից և էսպրեսոյից ըմպելիքներ, ըմպելիքներ պատրաստված սուրճի հիմքով, ըմպելիքներ պատրաստված էսպրեսոյի հիմքով, ըմպելիքներ պատրաստված թեյի հիմքով, փոշիացված շոկոլադ և վանիլին, ըմպելիքներին ավելացնելու թանձրուկներ, շոկոլադային օշարակ, շոկոլադային թանձրուկ, մրգային թանձրուկներ, բացառությամբ լոռամրգի և խնձորի թանձրուկների. թխված ապրանքներ, մասնավորապես՝ մաֆիններ, ցորենի կամ վարսակի բլիթներ, թխվածքաբլիթներ, չոր բլիթներ, խմորեղեն և հացեր, սենդվիչներ, գրանուլա. խմելու համար պատրաստ սուրճ, խմելու համար պատրաստ թեյ. պաղպաղակ և սառեցված քաղցրավենիք. շոկոլադ, կոնֆետներ, համեմունքների և հրուշակեղենի պարունակությամբ ըմպելիքների ջնարակ (թոփինգ).

դաս 32. մրգային ըմպելիքներ և մրգահյութ պարունակող զովացուցիչ ըմպելիքներ, մրգային հյութեր, մրգի և հյութի հիմքով փրփրուն ըմպելիքներ և գազավորված ըմպելիքներ. սառեցված մրգային ըմպելիքներ և սառեցված մրգային հիմքով ըմպելիքներ. ըմպելիքների հեղուկ և փոշի խառնուրդներ, անուշահամ մրգահյութեր ըմպելիքներ համար:
(740) Զ. Մանուկյան

(210) **20130421** (111) **20693**
(220) **02.04.2013** (151) **02.12.2013**
(181) **02.04.2023**

(730) Սթարբաքս Քորփորեյշն (գործող ինչպես Սթարբաքս Քոֆի Քամփնի), Վաշինգտոնի նահանգ, US
(442) 06.05.2013
(540)

CAFFE VERONA

(526) «CAFFE» բառն ինքնուրույն պահպանության օբյեկտ չէ:

(511)
դաս 30. սուրճից պատրաստված ըմպելիքներ. սուրճ. սուրճի հատիկներ. աղացած սուրճ:
(740) Զ. Մանուկյան

(210) **20130437** (111) **20694**
(220) **04.04.2013** (151) **02.12.2013**
(181) **04.04.2023**

(730) «Քասախո ռեմդետալ» ՍՊԸ, Երևան, Աշտարակի խճուղի 47/5, AM
(442) 17.04.2013
(540)

Ameli
Амели
Ամելի

(511)
դաս 33. ալկոհոլային խմիչքներ (բացառությամբ գարեջրի):

(210) **20130458** (111) **20695**
(220) **08.04.2013** (151) **02.12.2013**
(181) **08.04.2023**

(730) «Ղ-տեկեկոմ» ՓԲԸ, Երևան, Արգիշտի 4/1, AM
(442) 17.04.2013
(540)

BIT

(511)
դաս 9. գիտական, ծովային, երկրաբաշխական, լուսանկարչական, կինեմատոգրաֆիական, օպտիկական, կշռման, չափման, ազդանշանման, հսկման (ստուգման), փրկության և ուսուցման սարքեր ու գործիքներ. էլեկտրականության հաղորդման, միացման,

փոխակերպման, կուտակման, կարգավորման կամ վերահսկման սարքեր և գործիքներ. ձայնի կամ պատկերի գրառման, հաղորդման կամ վերարտադրման սարքեր. ձայնագրման սկավառակներ. կոմպակտ սկավառակներ, DVD-ներ. կանխավճարով աշխատող ապարատների մեխանիզմներ. դրամարկղային ապարատներ, հաշվիչ մեքենաներ, տեղեկատվության մշակման սարքավորումներ և համակարգիչներ. համակարգչային ծրագրային ապահովում. կրակմարիչներ.

